# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N5

## ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-19/9 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Ք. Սևան

23.04.2019թ.
ժամը 10:30

**Հանձնաժողովի անդամներ՝** Վարդուհի Վարդանյան

Մարի Սիմոնյան

Ռոմելա Հարությունյան

**Գնումները համակարգող՝** Լանա Դավթյան

**<u>ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-19/9 ծածկագրով հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին</u>**

1. 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված ապրանքների ամբողջական նկարագրի համապատասխանությունը սույն հրավերի պահանջներին գնահատելու մասին:
2. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ տրամադրած տեղեկատվությունը գնահատելու մասին:
3. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին:
4. Ընտրված մասնակից հայտարարելու մասին:
5. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

**<u>1. 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված ապրանքների ամբողջական նկարագրի համապատասխանությունը սույն հրավերի պահանջներին գնահատելու մասին.</u>**

1.1 ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-19/9 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին **<<ՊՐԵՄԻՈՒՄ ՖՈՒԴ>> ՍՊԸ-ն, <<ԴԱՆՆԻԿ>> ՍՊԸ-ն, <<ՑԻԿԼՈԻԴ>> ՍՊԸ-ն, <<ԿԱՌՈԼ>> ՍՊԸ-ն, <<ՍՅ.ՌՈՒ.ՄԱ>> ՍՊԸ-ն, <<ԼԵԲՐՈՆ>> ՍՊԸ-ն, <<ՀԱՎԵՐԺ ԸՆԿԵՐՆԵՐ>> ՍՊԸ-ն, ՎԻԿՏՈՐՅԱ ՍԱՄՎԵԼՅԱՆ Ա/Ձ-ն, <<ՖՈՏՈՆ>> ՍՊԸ-ն, <<ԷԿՈ ՖՐՈՒՏ>> ՍՊԸ-ն և <<ԳԱԼԻՄԱ>> ՍՊԸ-ն** հայտով նախատեսված ապրանքների ամբողջական նկարագիրը ներկայացրել են հրավերով սահմանված ժամկետում և կարգով:

1.2 **<<ՊՐԵՄԻՈՒՄ ՖՈՒԴ>> ՍՊԸ-ի, <<ԴԱՆՆԻԿ>> ՍՊԸ-ի, <<ՑԻԿԼՈԻԴ>> ՍՊԸ-ի, <<ԿԱՌՈԼ>> ՍՊԸ-ի, <<ՍՅ.ՌՈՒ.ՄԱ>> ՍՊԸ-ի, <<ԼԵԲՐՈՆ>> ՍՊԸ-ի, <<ՀԱՎԵՐԺ ԸՆԿԵՐՆԵՐ>> ՍՊԸ-ի, ՎԻԿՏՈՐՅԱ ՍԱՄՎԵԼՅԱՆ Ա/Ձ-ի, <<ՖՈՏՈՆ>> ՍՊԸ-ի, <<ԷԿՈ ՖՐՈՒՏ>> ՍՊԸ-ի և <<ԳԱԼԻՄԱ>> ՍՊԸ-ի** կողմից ներկայացված առաջին տեղը զբաղեցրած մասնակցների կողմից առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագիրը համապատասխանում են սույն հրավերի պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

## 2. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ տրամադրած տեղեկատվությունը գնահատելու մասին:

2.1 Հանձնաժողովը ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգի>> 43-րդ կետի 3-րդ ենթակետով 17.04.2019թ-ին էլեկտրոնային փոստի միջոցով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում է ուղարկել 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ **<<ՊՐԵՄԻՈՒՄ ՖՈՒԴ>> ՍՊԸ-ի, <<ԴԱՆՆԻԿ>> ՍՊԸ-ի, <<ՑԻԿԼՈՒԴ>> ՍՊԸ-ի, <<ԿԱՌՈԼ>> ՍՊԸ-ի, <<ՍՅ.ՌՈՒ.ՄԱ>> ՍՊԸ-ի, <<ԼԵԲՐՈՆ>> ՍՊԸ-ի, <<ՀԱՎԵՐԺ ԸՆԿԵՐՆԵՐ>> ՍՊԸ-ի, ՎԻԿՏՈՐՅԱ ՍԱՄՎԵԼՅԱՆ Ա/Ձ-ի, <<ՖՈՏՈՆ>> ՍՊԸ-ի, <<ԷԿՈ ՖՐՈՒՏ>> ՍՊԸ-ի և <<ԳԱԼԻՄԱ>> ՍՊԸ-ի՝** հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ: ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն ՀՀ կառավարության 04.05.2017թ-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգի>> 44-րդ կետով սահմանված ժամկետում՝ հարցումը ստանալու օրվանից 3 աշխատանքային օրվա ընթացքում տրամադրել է հարցման մասին տեղեկատվությունները, համաձայն որի **<<ՊՐԵՄԻՈՒՄ ՖՈՒԴ>> ՍՊԸ-ն, <<ԴԱՆՆԻԿ>> ՍՊԸ-ն, <<ՑԻԿԼՈՒԴ>> ՍՊԸ-ն, <<ՍՅ.ՌՈՒ.ՄԱ>> ՍՊԸ-ն, <<ԼԵԲՐՈՆ>> ՍՊԸ-ն, <<ՀԱՎԵՐԺ ԸՆԿԵՐՆԵՐ>> ՍՊԸ-ն, և <<ԳԱԼԻՄԱ>> ՍՊԸ-ն** հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ չունեն:

**<<ԷԿՈ ՖՐՈՒՏ>> ՍՊԸ-ն** վերը նշված եզրակացության համաձայն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի **2000 ՀՀ դրամ** ժամկետանց պարտավորություն, որը չի գերազանցում է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված շեմը:

**ՎԻԿՏՈՐՅԱ ՍԱՄՎԵԼՅԱՆ Ա/Ձ-ն** վերը նշված եզրակացության համաձայն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի **8000 ՀՀ դրամ** ժամկետանց պարտավորություն, որը գերազանցում է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված շեմը:

**<<ԿԱՌՈԼ>> ՍՊԸ-ն** վերը նշված եզրակացության համաձայն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի **288000 ՀՀ դրամ** ժամկետանց պարտավորություն, որը գերազանցում է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված շեմը:

Ելնելով վերգրյալից և ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017 թ-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգի>> 44-րդ կետով հանձնաժողովը որոշեց **ՎԻԿՏՈՐՅԱ ՍԱՄՎԵԼՅԱՆ Ա/Ձ-ի** և **<<ԿԱՌՈԼ>> ՍՊԸ-ի** հայտերը **մերժել**:

Նկատի ունենալով, որ 2-րդ, 5-րդ, 10-րդ և 63-րդ չափաբաժիններով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչված **ՎԻԿՏՈՐՅԱ ՍԱՄՎԵԼՅԱՆ Ա/Ձ-ի** և 25-րդ չափաբաժնով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչված **<<ԿԱՌՈԼ>> ՍՊԸ-ի** հայտերը մերժվել են, հանձնաժողովը որոշեց նշված չափաբաժիններով առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից հրավերով պահանջվող փաստաթղթերի ներկայացման դիմումը /հավելված 6/ և առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը /Հավելված 6.1/ ներկայացնելու պահանջ ներկայացնել հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակից՝

<<**ՑԻԿԼՈՒԴ**>> **ՍՊԸ-ին** 25-րդ չափաբաժնով

<<**ՑԻԿԼՈՒԴ**>> **ՍՊԸ -ին** ուղարկել ծանուցում առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից 3 աշխատանքային օրվա ընթացքում մինչև 30.04.2019թ-ի ժամը 09:00 էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-19/9 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին հայտով առաջադրված ապրանքի ամբողջական նկարագիրը:

**2-րդ, 5-րդ, 10-րդ և 63-րդ** չափաբաժինների համար ներկայացված բոլոր գնային առաջարկները գերազանցում են սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների գնման հայտով սահմանված գներին:

| Չափաբաժին | Գնման ենթական ապրանքի անվանումը | Չափման միավորը | Քանակը | Գնման հայտով սահմանված գինը /ՀՀ դրամ | Մասնակիցների անունները | Գնային առաջարկ ՀՀ դրամով | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | Արժեքը /ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը/ | ԱԱՀ | Ընդհանուր գինը /տառերով և թվերով/ |
| 2 | Նուռ | կգ | 433 | 360256 | <<ՖՈՏՈՆ>> ՍՊԸ | 396916,67 | 79383,33 | 476300 |
| | | | | | <<ԼԵԲՐՈՆ>> ՍՊԸ | 313925 | 62785 | 376710 |
| | | | | | <<ԴԱՆՆԻԿ>> ՍՊԸ | 324025 | 64805 | 388830 |
| 5 | Ծիրան | կգ | 1400 | 350000 | <<ՍՅ.ՌՈՒ.ՄԱ>> ՍՊԸ | 455000 | 91000 | 546000 |
| | | | | | <<ԳԱԼԻՄԱ>> ՍՊԸ | 344167 | 68833 | 413000 |
| | | | | | <<ՖՈՏՈՆ>> ՍՊԸ | 428166,67 | 85633,33 | 513800 |
| | | | | | <<ԴԱՆՆԻԿ>> ՍՊԸ | 383830 | 76766 | 460596 |
| 10 | Կաղամբ | կգ | 1000 | 120000 | <<ՖՈՏՈՆ>> ՍՊԸ | 158333,33 | 31666,67 | 190000 |
| | | | | | <<ԴԱՆՆԻԿ>> ՍՊԸ | 120000 | 24000 | 144000 |
| 63 | Լոբի (կանաչ) | կգ | 1500 | 525000 | <<ՍՅ.ՌՈՒ.ՄԱ>> ՍՊԸ | 475000 | 95000 | 570000 |
| | | | | | <<ՖՈՏՈՆ>> ՍՊԸ | 625000 | 125000 | 750000 |
| | | | | | <<ԴԱՆՆԻԿ>> ՍՊԸ | 535000 | 107000 | 642000 |

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգի>> 40-րդ կետի 5-րդ ենթակետի հանձնաժողովը որոշեց վերը նշված չափաբաժինների համար 1-ին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով կասեցնել հանձնաժողովի նիստը և առաջարկված գների նվազեցման նպատակով, ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ միաժամանակյա բանակցություններ վարելու նպատակով հրավիրել նիստ, սույն թվականի ապրիլի 26-ին ժամը 10:00-ին ք. Սևան Կարմիր Բանակի 68 հասցեում, ֆինանսական բաժնի վարչական շենքում: Բանակցությունների վարման համար սահմանել ժամանակ 20 րոպե:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

**<u>3.Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.</u>**

3.1 Մասնակիցների կողմից հայտի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:
Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

**5. <u>Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.</u>**

5.1 ՀՀ ԱՆ <<Սևանի հոգեբուժական հիվանդանոց>> ՓԲԸ-ի ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-19/9 ծածկագրով ընթացակարգի հաջորդ նիստը հրավիրել 26.04.2019թ.-ին 10:00, ք. Սևան Կարմիր Բանակի 68 հասցեում, ֆինանսական բաժնի վարչական շենքում:
Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի անդամներ՝ Վ. Վարդանյան

Մ. Սիմոնյան

Ռ. Հարությունյան

Գնումների համակարգող՝ Լ. Դավթյան